| 2185 | 1 | 8 | 1 |                                         | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին             | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝          | 50.0  | 50.0  | 0.0 | 50.0  | 50.0  | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2211 | 2 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն                 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն,            | 50.0  | 50.0  | 0.0 | 50.0  | 50.0  | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն             | 50.0  | 50.0  | 0.0 | 50.0  | 50.0  | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
|      |   |   |   | - Հնրհանուր բնույթի այլ ծառայություններ | 50.0  | 50.0  | 0.0 | 50.0  | 50.0  | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2230 | 2 | 3 | 0 | Արտաքին ռազմական օգնություն, որից՝      | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2231 | 2 | 3 | 1 | Արտաքին ռազմական օգնություն             | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2240 | 2 | 4 | 0 | Հետազոտական և նախագծային                | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2241 | 2 | 4 | 1 | Հետազոտական և նախագծային                | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին             | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին             | 50.0  | 50.0  | 0.0 | 50.0  | 50.0  | 0.0 | 0.0   | 0.0   | 0.0 | 0.0 |

[illegible]

[illegible]



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 14

### ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կանոնները՝ *համաձայն հավելվածի*

2. Հաստատել աղբի հավաքման և փոխադրման ժամանակացույցն ու երթուղիները, կազմել համայնքի աղբահանության սխեման և քարտեզը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպման պատասխանատվությունը վերապահել աշխատակազմի ղիխավոր մասնագետ՝ Լևոն Խուրոդյանին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՍ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆ ԵՐ**

1.1. Սույն կանոնները նպատակ ունեն կարգավորել համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

**2. ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

2.1. Համայնքի իրավասությունը իր վարչական տարածքում աղբահանության կազմակերպման առումով, ենթադրում է

ՀՀ օրենսդրությամբ ն սույն կանոնների դրույթների համաձայն կազմակերպել աղբի (համայնքի բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած և կազմակերպությունների ու առևտրի օբյեկտների արտադրած (իրենց կազմով, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրած թափոններից չտարբերվող) այս մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպասողական հատկություններն ու տեղում չեն վերաօտագործվում) հավաքման, տեղափոխման, տեսակավորման, օգտահանման, վերամշակման և թաղման աշխատանքների իրականացումը:

2.2. Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին կարող են իրականացնել անմիջականորեն համայնքային բյուջետային լիմնարկը(ները) կամ աղբահանության ծառայություն մատուցողների դերում կարող են հանդես գալ այլ մասնագիտացված կազմակերպությունները, այդ թվում՝ համայնքի մասնակցությամբ ստեղծված առևտրային կազմակերպությունը (ները) կամ մասնավոր առևտրային կազմակերպությունները, կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ օպերատոր). որոնք ունեն բավարար կարողություններ և միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու աղբահանության ծառայություններ համայնքի կարիքների համար՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է հատուկ սուբստար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով, աղբահանության կազմակերպման նպատակների համար) մեքենաների՝ աղբատար փոխադրամիջոցների, միջոցով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է համայնքի կողմից հաստատված աղբահանության քարտեզին համապատասխան, սահմանված ներհամայնքային ճանապարհներով) ու մայրուղիներով (համաձայն աղբահանության սխեմաների):

2.4. Աղբահանության կազմակերպմամբ զբաղվող կազմակերպությունները աղբը տեղափոխում են աղբավայր/աղբավայրեր, հատուկ հատկացված տեղեր, որոնք պետք է լինեն արտոնագրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և գտնվեն համայնքի հսկողության ներքո:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶԻ ԱՌԵ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆ ԵՐ**

1.1. Սույն կանոնները նպատակ ունեն կարգավորել համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

**2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

2.1. Համայնքի իրավասությունը իր վարչական տարածքում աղբահանության կազմակերպման առումով, ենթադրում է

ՀՀ օրենսդրությամբ ն սույն կանոնների դրույթների համաձայն կազմակերպել աղբի (համայնքի բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած և կազմակերպությունների ու առևտրի օբյեկտների արտադրած (իրենց կազմով, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրած թափոններից չտարբերվող) այս մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպասողական հատկություններն ու տեղում չեն վերաօտագործվում) հավաքման, տեղափոխման, տեսակավորման, օգտահանման, վերամշակման և թաղման աշխատանքների իրականացումը:

2.2. Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սակիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին կարող են իրականացնել անմիջականորեն համայնքային բյուջետային կիմնարկը(ները) կամ աղբահանության ծառայություն մատուցողների դերում կարող են հանդես գալ այլ մասնագիտացված կազմակերպությունները, այդ թվում՝ համայնքի մասնակցությամբ ստեղծված առևտրային կազմակերպությունը (ները) կամ մասնավոր առևտրային կազմակերպությունները, կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ օպերատոր). որոնք ունեն բավարար կարողություններ և միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու աղբահանության ծառայություններ համայնքի կարիքների համար՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է հատուկ սղբատար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով, աղբահանության կսպակերպման նպատակների համար) մեքենաների՝ աղբատար փոխադրամիջոցների, միջոցով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է համայնքի կողմից հաստատված աղբահանության քարտեզին համապատասխան, սահմանված ներհամայնքային ճանապարհներով) ու մայրուղիներով (համաձայն աղբահանության սխեմաների):

2.4. Աղբահանության կազմակերպմամբ զբաղվող կազմակերպությունները աղբը տեղափոխում են աղբավայր/աղբավայրեր, հատուկ հատկացված տեղեր, որոնք պետք է լինեն արտոնագրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և գտնվեն համայնքի հսկողության ներքո:

### 3. ԱՂԲՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀՈԶԱԿՈՒՄԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Աղբի հավաքման, հեռացման/տեղափոխման, տեղակայման, փոխադրման, տեսակավորման, պահման/թաղման, աղբավայրերի շահագործման հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը համայնքի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, որը նպատակաուղղված է համայնքի բնակչության հանրության) հանրային առողջության, անվտանգության և բարեկեցության պահպանմանը, թափոնների բացասական ներգործությունից շրջակա միջավայրի պահպանությանը, նյութահումքային և էներգետիկ ռեսուրսների քանակական օգտագործման ապահովմանը, թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցմանը, ինչպես նաև ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպմանը:

3.2. համայնքի ղեկավարը աղբահանության կազմակերպման ռազմավարության հետագա պլաններում նախատեսում է հետևողական և նպատակաուղղված աշխատանքներ տանել հանրության հետ՝ համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման աշխատանքների հետագա շարունակական գործընթացների, բնագավառը կարգավորող իրավական ակտերի, իր որդեգրած քաղաքականության վերաբերյալ:

3.3. համայնքի ղեկավարը մշակում և հաստատում է հանրության հետ կապերի, հանրային իրազեկման, համայնքի բնակչությանը իրենց իրավունքների ու պարտականությունների մասին պատշաճ իրազեկելու միջոցառումների պլան, որը պետք է կազմի համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման ռազմավարության բաղկացուցիչ մասը:

3.4. համայնքի ղեկավարը սահմանում է այն պաշտոնատար իրավասու անձանց ցանկը, ովքեր պատասխանատու են աղբահանության կազմակերպման ամենօրյա աշխատանքների համար և ովքեր կարող են արձականքել ստացված հաղորդումներին, բողոքներին, նամակներին:

### 4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Աղբի համար նախատեսված վայրերում անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ վտանգավոր նյութեր, կամ այլ վտանգավոր թափոններ (ինչպիսի սահմանում տրված է «Թափոնների մասին» ՀՀ 24.11.2004թ. օրենքում, ինչպես նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կողմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակային ինֆեկցիաներ), տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, մասնավորապես համայնքի բնակիչները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ճանաչված և ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոններին համապատասխան, պարտավորվում են մաքուր պահել քաղաքի ցանկացած հանրային տարածքի փողոցները, մայրերը, պուրակները, այլ հանրային տարածքները, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքները, առանց համապատասխան թույլտվությունների չայրեն կուտակված աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենե տոպրակները և շշերը, ներկանյութերը ու յուղերը, ռետինե, կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոններ), որպեսզի դրանք պատճառ

չհանդիսանան հանրային տարածքներում աղբի չնախատեսված վայրերում թափման, կուտակման և պահման համար:

4.3. Համայնքի վարչական տարածքում աղբահանությունն իրականացվում է համայնքի ղեկավարի և աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի/երի համաձայն, որոնք չեն կարող հակասել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին, ինչպես նաև սույն կանոններին:

4.4. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են աղբահանող կազմակերպությանը կամ համայնքին ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտության մասին, որը կհամարվի առանձին ծառայություն և որի համար կկնքվի առանձին պայմանագիր: Տվյալ դեպքում աղբը կարող է տեղափոխվել անհատական բնակելի տների կամ ոչ բնակելի տարածքների բակային հատվածներից, եթե այդպիսի հնարավորություն ընձեռվում է աղբահանող մեքենայի մուտքի և ելքի համար:

## 5. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ԻՐԱԶԵԿԵԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

- 5.1. Աղբահանության կազմակերպման և վերահսկողության բնագավառում համայնքի ղեկավարը
- սահմանում է աղբահանության կազմակերպման, սանիտարական մաքրման սխեմաները,
  - որոշում է աղբահանության կազմակերպման քաղաքականությունը,
  - սահմանում է ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն վճարներ,
  - որոշում է համայնքի աղբահավաքման քարտեզը և տեղափոխման ուղղությունները,
  - իրականացնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջներից բխող վարչական ակտերի ընդունման և վարչական պատասխանատվության ենթարկելու, գործառույթներ,
  - զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության, հանրության աողջության և անվտանգության ապահովման ուղղությամբ բնակչության իրազեկման բարձրացման խնդիրներով՝ պարբերաբար հանրությանը տեղեկացնելով Հայաստանի Հանրապետությունում սույն բնագավառը կարգավորող իրավական ակտերի մասին,
  - հետևողականորեն, օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցներով, իրականացնում է հանրության բնապահպանական գիտելիքների բարձրացման, համայնքի կողմից ընդունվող ռազմավարական պլաններին ու որոշումներին, բնակչության ակտիվ մասնակցության աշխատանքներ:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն համայնքային կանոնները կարող են փոփոխվել, լրացվել, խմբագրվել միայն համայնքի ավագանու որոշմամբ՝ ըստ անհրաժեշտության: Համայնքային կանոնները ենթակա են պարտադիր վերանայման այն դեպքերում, երբ ընդունվել են սույն բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության այլ իրավասու մարմինների ընդունած իրավական ակտեր կամ բնագավառը կարգավորող ազգային չլեռական հայեցակարգ ու ռազմավարության:

6.2. համայնքի ղեկավարն իր պարտքն է համարում նախագգուշացնել համայնքի վարչական տարածքում աղբահանության ծառայություն մատուցող և ստացող անձանց, որ.

Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի

43.1-րդ հոդվածի համաձայն «Աղբահանության աշխատանքները ժամանակին

չկազմակերպումը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ

սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Մույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում աղբահավաք մեքենաներից, դուրս աղբ թափելը առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսունապատիկի չափով պաշտոնատար անձանց նկատմամբ քառասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Մույն հոդվածի երրորդ մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկից մինչև հիսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Առանց աղբահանության պայմանագրի աղբը հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ քառասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով

Մույն հոդվածի հինգերորդ մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկից մինչև հիսունապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության գործող վարչական օրենսդրության համաձայն վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության խախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Ոչ ոք չի կարող վարչական իրավախախտման համար ներգործության միջոցի եեթարկվել այլ կերպ, քան օրենսդրությամբ սահմանված հիմունքներով ու կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.04.2014թ.

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ  
ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ**

| Աղբավայր<br>տեղափոխվող<br>աղբի տարեկան<br>քանակ | Ցուրաքանչուր<br>մեքենայի երթերի<br>քանակը | Երթուղիների<br>քանակը | Սպասարկվող<br>տարածքներ                         |
|-------------------------------------------------|-------------------------------------------|-----------------------|-------------------------------------------------|
| 700 մ³                                          | 1                                         | 1                     | 1-ին փողոցից<br>մինչև 8-րդ և 19-րդ<br>փողոցները |

| Մեկ երթուղու<br>սպասարկվող,<br>բնակչության<br>թվաքանակը | Համայնքի և<br>աղբավայրի միջև<br>հեռավորությունը/<br>կմ | Մեկ երթուղու<br>միջին<br>տևողությունը/ ժամ |
|---------------------------------------------------------|--------------------------------------------------------|--------------------------------------------|
| 1100                                                    | 8                                                      | 4 /ձեռքով բարձում/                         |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԸ**


| Հ/Հ | ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՄՑԵՆ                                                 |
|-----|---------------------------------------------------------------------|
| 1.  | 1-ին փողոցից մինչև 6-րդ փողոցի խաչմերուկ                            |
| 2.  | 2-րդ փողոցի 1-ին շենքից մինչև միջնակարգ դպրոցի շենքը                |
| 3.  | 3-րդ փողոցի 1-ին շենքից մինչև 72-ի շենքի տարածք                     |
| 4.  | 4-րդ փողոցի 1-ին շենքից մինչև խմելու ջրամբարի տարածք                |
| 5.  | 5-րդ փողոցը 1-ինից անցումը 2-րդ փողոցի                              |
| 6.  | 6-րդ փողոցը գերեզմանատնից մինչև 2-րդ փողոցին հատվող տարածքը         |
| 7.  | 7-րդ փողոցը Աշտարակ ձորի հարակից փողոցի տարածքը հատվող 2-րդ փողոցին |
| 8.  | 8-րդ փողոցը միջնակարգ դպրոցը 4-րդ փողոցին հատվող տարածքը            |
| 9.  | 19-րդ փողոցը, որը միացնում է 3-րդ և 4-րդ փողոցները                  |


**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ՄԱԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Handwritten notes at the top of the page, including "Handwritten notes" and "Handwritten notes" in red ink.







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 15

#### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2014 թվականի մարտի 4-ի թիվ 83-Ա որոշումը՝ *համայնքի ավագանին որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից Նոր Երզնկա գյուղական համայնքում վարչական հսկողության և կադրային հսկողության գործի վերաբերյալ կազմված 20.03.2014թվականի N03 արձանագրությունը ընդունվել ի գիտություն:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ արձանագրված թերությունները և բացթողումները վերացնել աշխատանքային խմբի կողմից նշված ժամկետներում:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱՂԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՍ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Արմեն Բաղդասարյան* ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 16

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է*

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Նոր Երզնկա համայնքի 102 ծածկագրով հողամասերի ոռոգման ջրի անխափան մատակարարման համար 108 ծածկագրով տարածքի չօգտագործվող ստորգետնյա ոռոգման ջրի ցանցից 220 գծամետր d-200, 200 գծամետր d-150 տրամաչափի մետաղյա խողովակ տրամադրել <Աշտարակ ԶՕԸ>-ին 102 ծածկագրով պտղատու այգիների ջրարբիացման համար՝ անհատույց օգտագործման իրավունքով:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Կ. Կոտայք* ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա ,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 17-Ն

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ,  
ԹԱՂՄԱՆ ԵՎ ԴԻԱԿԻԶՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ  
ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, <Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է*

#### 1. Սահմանել՝

ա/ Նոր Երզնկա համայնքում թաղման և դիակիզման կարգը՝ համաձայն հավելված 1-ի

բ/ Նոր Երզնկա համայնքի գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և թաղումների գրանցման կարգը՝ համաձայն հավելված 2-ի

գ/ Նոր Երզնկա համայնքում գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոններ՝ համաձայն հավելված 3-ի

դ/ Նոր Երզնկա համայնքում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի հատկացման կարգ՝ համաձայն հավելված 4-ի

ե/ Նոր Երզնկա համայնքում վերահուղարկավորման կարգ՝ համաձայն հավելված 5-ի

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## Կ Ա Ր Գ

### ՆՈՐ ԵՐԶԵՎԻԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԹԱՂՄԱՆ ԵՎ ԴԻԱԿԻԶՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) գերեզմանատան սահմաններում տրամադրված գերեզմանատեղում հողին հանձնելու (թաղելու) կամ դիակիզելու հետ կապված գործողությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝ գերեզմանատան տնօրինություն՝ համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի, կամ համայնքի ղեկավարի կողմից ստեղծված հուղարկավորության կազմակերպման համար օրենքով նախատեսված ոչ առևտրային կազմակերպություն. դիակիզարան՝ մահացածի մարմինը դիակիզելու համար հատուկ վառարաններով, հանգուցյալի հետ հրաժեշտի ծիսակատարման սրահով, դիակների ժամանակավոր պահման սառնարանային համալիրով կահավորված հատուկ կառույց. աճյունասափոր՝ չքայքայվող նյութից (մետաղյա կամ պլաստիկ) պատրաստված կափարիչի հերմետիկությունն ապահովող սրվակ (տրամագիծը՝ 0,15 մ, երկարությունը՝ 0,20 մ), որտեղ տեղադրվում է մահացածի մարմնի դիակիզումից հետո ստացված մոխիրը. հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար հատուկ կառուցված պատ:

3. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունն իրականացվում է մահվան վկայականի հիման վրա:

4. Մահվան վկայականը տրվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների (գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի) կողմից: Մահացածի մարմնի հերձման դեպքում մահվան վկայականը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 6-ի N 715 որոշմամբ սահմանված կարգով՝ մահվան պատճառի մասին պաթոլոգաանատոմիական կենտրոնի կողմից անվճար տրված եզրակացության հիման վրա: Առանց մահացածի մարմնի հերձման՝ մահվան վկայականը կարող է տրվել մահվան պատճառի մասին եզրակացություն տվող բժշկի տեղեկանքի հիման վրա:

5. Մահացածի հուղարկավորման տեղի և տեսակի ընտրության, գերեզմանատեղի տրամադրման հարցերը կարգավորվում են՝ հաշվի առնելով անձի կենդանության ժամանակ իր հուղարկավորության պայմանների վերաբերյալ նրա կամքի գրավոր արտահայտությունը կամ, դրա բացակայության դեպքում, հուղարկավորության կազմակերպումն ստանձնողների ցանկությունը՝ օրենքով սահմանված կարգով:

6. Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար տրամադրվում է գերեզմանատեղ՝ 2,5 քառ. մետր մակերեսով (2,5 մ x 1,0 մ): Ընտանեկան գերեզմանի համար անվճար հիմունքներով տրամադրվում է առավելագույնը 12,0 քառ. մետր, որից ավելի լինելու դեպքում տարածքը տրամադրվում է վճարովի հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

7. Մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը համայնքի ղեկավարին ներկայացնում է մահվան վկայականը և առաջարկություն հուղարկավորության տեղի ու տեսակի (հողին հանձնում կամ դիակիզում) վերաբերյալ:

8. Համայնքի ղեկավարը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ համատեղ որոշում է հուղարկավորության տեղը, ինչպես նաև օրը և ժամը: Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո:

9. Համայնքի ղեկավարը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական:

10. Ընտանեկան գերեզմանի առկայության դեպքում գերեզմանատեղը հատկացվում է այդ գերեզմանի տարածքում նախկինում տրված գերեզմանի վկայականի հիման վրա, որում կատարվում են համապատասխան գրանցումներ: Նշված գերեզմանի վկայականի բացակայության դեպքում հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տրվում է գերեզմանի նոր վկայական:

11. Նոր գերեզմանը հատկացվում է օրենքով սահմանված կարգով և չափերով՝ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծով (սխեմայով) նախատեսված հերթականությամբ: Երեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ համատեղ տեղում սահմանապույուներով նշում է գերեզմանի սահմանները:

12. Համայնքի ղեկավարը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին ներկայացնում է իր կողմից կատարվող՝ մահացածին հողին հանձնելու, դիակիզման նախապատրաստական աշխատանքների (գերեզմանի փորում, թաղման կազմակերպում, գերեզմանի կարգավորում, դիատար և այլ ավտոմեքենաների տրամադրում, դիակիզում) և մատուցվող այլ վճարովի ծառայությունների ցանկը: Նշված ծառայություններից օգտվելը կամավոր է:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված՝ մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը հաստատում է համայնքի ղեկավարը:

14. Աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ կամ ընտանեկան գերեզմանում՝ դիակիզարանի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

15. Մահացածի հետ հրաժեշտի և հուղարկավորության ծիսակատարությունը կարող է իրականացվել համայնքներում ձևավորված ազգային և կրոնական ավանդույթի համաձայն:

16. Հուղարկավորության ավարտից հետո գերեզմանատան տնօրինությունը գերեզմանի վրա տեղադրում է մետաղյա ցուցանակ, իսկ աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու դեպքում փակվում է սալաքարով, որոնց վրա նշվում են հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը և գերեզմանատեղի (աճյունասափորի) հաշվառման համարը: Մետաղյա ցուցատախտակը և աճյունասափորի սալաքարը պատրաստվում և տեղադրվում են գերեզմանատան տնօրինության միջոցների հաշվին:

17. Հուղարկավորությունը դիակիզման միջոցով կամավոր է: Այն իրականացնելու համար հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը գրավոր դիմում է դիակիզարանի տնօրինությանը՝ ներկայացնելով մահվան վկայականը:

18. Դիակիզարանի պատասխանատու անձը դիակիզման մատյանում կատարում է դիակիզման օրվա ու ժամի վերաբերյալ գրանցում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի պատվերով կազմակերպում է մահացածի մարմնի ընդունումը, հրաժեշտի ծիսակատարությունն ու դիակիզումը: Աճյունասափորը հանձնվում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին կամ, նրա բացակայության դեպքում, հարազատներից որևէ մեկին՝ դիակիզումից հետո մեկ օրվա ընթացքում:

19. Մահացածի հարազատների, ազգականների և այլ անձանց կողմից հուղարկավորության կազմակերպումից հրաժարվելու կամ, նրանց բացակայության դեպքում, մահացածի հուղարկավորությունն ստանձնում է քաղաքացու վերջին մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:

20. Ազատագրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձանց հուղարկավորությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

21. Ինքնությունը չպարզված անձի հուղարկավորությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների համաձայնությամբ՝ քաղաքացիական գերեզմանատներում հատուկ հատկացված տեղերում: Ինքնությունը չպարզված անձի դիակիզումն արգելվում է՝ բացառությամբ սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքերի:

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ Կ Ա Ր Գ

1. Սույն կարգով սահմանվում են մահացած անձանց հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի անվամբ գերեզմանատներում գերեզմանատեղերի (գերեզմանների) հաշվառման և թաղումների գրանցման կարգն ու մատյանի ձևը:

2. Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանները (այսուհետ՝ մատյան) վարում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ նրանց կողմից լիազորված պատասխանատու անձը յուրաքանչյուր գերեզմանատան համար:

3. Մատյանի թերթերը համարակալվում են, կարվում և կնքվում սույն կարգի 2-րդ կետում նշված մարմինների կողմից:

4. Մատյանում գրանցվում են՝

ա) գրանցման հերթական համարը, տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,

բ) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը,

գ) մահացածի ծննդյան և մահվան տարեթվերը, ամսաթվերը և ամիսները,

դ) մահվան վկայականի համարը, մահը գրանցող մարմնի անվանումը, գրանցման տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,

ե) մահացածի վերջին բնակության վայրը,

զ) գերեզմանի վկայականի համարը, գերեզմանի տեղը (ծառուղի, հատված, շարք),

է) գերեզմանի մակերեսը (քառ. մետր)՝ ընդամենը, այդ թվում՝ վճարովի,

ը) հուղարկավորության կազմակերպումն ստանձնած անձի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի համարը և մահացածի հետ ազգակցական կապը,

թ) տվյալ գերեզմանում թաղվածների թիվը,

ժ) այլ նշումներ:

5. Մատյանի համապատասխան պոնակներում ստորագրում են գերեզմանի վկայականն ստացողը և գրանցում կատարող պատասխանատու անձը:

6. Մատյանում ուղղումներ և ջնջումներ կատարելն արգելվում է: Անհրաժեշտության դեպքում՝ կատարված ուղղումները կամ ջնջումները վավերացվում են գրանցման մատյանը վարող պատասխանատու անձի ստորագրությամբ:

7. Մատյանները պահվում են անժամկետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



**Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր**  
**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ**

1. Սույն ընդհանուր կանոններով սահմանվում են գերեզմանատների բարեկարգման, պահպանման ու շահագործման (այսուհետ՝ շահագործում) ընդհանուր կանոնները:
2. Գերեզմանատները շահագործվում են համայնքների բյուջեի միջոցների հաշվին:
3. Գերեզմանատների շահագործումն ապահովում է համայնքի ղեկավարը, կամ նրա կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունը:
4. Պետական լիազոր մարմինը գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման և հուղարկավորությունների կազմակերպման բնագավառում իրականացնում է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ հասարակական նշանակություն ունեցող գերեզմանատները և դիակիզարանները պահպանվում են բյուջետային հատկացումների հաշվին՝ հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:
6. Գերեզմանատները (դիակիզարանները) կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան:
7. Գերեզմանատներն ու դիակիզարանները տեղադրվում են բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից առնվազն 300 մետր հեռավորության վրա:
8. Համայնքներում նոր գերեզմանատների կազմակերպման, գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքները տրամադրվում և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
9. Գերեզմանատները և դիակիզարանները նախագծվում են դրանց համար հատկացված տարածքների ինժեներակառուցական հետազոտությունների նյութերի փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:
10. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում նախատեսվում են՝
  - ա) գերեզմանատան զբաղեցրած հողատարածքի սահմանները,
  - բ) գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ,
  - գ) օրենքով սահմանված չափերով գերեզմանների հատկացման համար տեղամասերը (ծառուղիները, հատվածները, շարքերը) և դրանց օգտագործման հերթականությունը՝ առանձնացնելով ընտանեկան գերեզմանների, անհատական գերեզմանատեղերի (մեկ անձի) և պատմամշակութային տեղամասերը,
  - դ) աճյունասամփոքների տեղադրման համար հուշապատերը,
  - ե) ճանապարհների ու շավիղների տեղադրությունը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,
  - զ) կանաչապատման տեղամասերը չպետք է գերազանցեն գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը,

Է) գերեզմանատան շահագործման և գերեզմանատնից օգտվելու համար անհրաժեշտ շինությունները, ենթակառուցվածքները՝ ելնելով տեղական պայմաններից (ավտոկայանատեղ, սգո արարողությունների սրահ, գրասենյակ, սգո պարագաների ու ծաղիկների վաճառքի կետ, գործիքների վարձույթի կետ, ոռոգման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական գուգարան, պարիսպ (ցանկապատ):

11. Ընտանեկան գերեզմանների սահմանների միջև տարածությունը պետք է լինի առնվազն 0,5 մետր: Ընտանեկան գերեզմաններում գերեզմանատեղերի և անհատական գերեզմանատեղերի միջև տարածությունը պետք է լինի մեկ մետր երկարությամբ ու առնվազն 0,5 մետր լայնությամբ:

12. Գերեզմանահորի խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մետր: Երեզմանահորի հատակն ստորգետնյա ջրերի մակարդակից պետք է առնվազն 2,5 մետր բարձր լինի:

13. Մահացածի աճյունը գերեզմանահորում տեղադրելուց հետո գերեզմանը ծածկվում է 0,5 մետր բարձրությամբ հողաթմբով, որի եզրերը պետք է լինեն գերեզմանահորի չափերից ավելին՝ գերեզմանահորը մակերևութային ջրերի թափանցումից պաշտպանելու նպատակով:

14. Աճյունասափորների հուշապատի բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 2,5 մետր, իսկ երկարությունը՝ գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծին (սխեմային) համապատասխան: Աճյունասափորները տեղադրվում են հուշապատի խորշերում (տրամագիծը՝ 0,2 մետր, խորությունը՝ 0,25 մետր) երեք հորիզոնական շարքով: Խորշերի միջև տարածությունն ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով պետք է լինի առնվազն 1,0 մետր: Յուրաքանչյուր աճյունասափորի համար տեղադրվում է սալաքար՝ 0,5 մ x 0,5 մ չափերով: Հուշապատի համար կարող է օգտագործվել գերեզմանատան պարիսպը:

15. Գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները:

16. Համայնքի ղեկավարը ապահովում է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպում աղբահանությունը:

17. Գերեզմանատան տարածքը պետք է ապահովված լինի մակերևութային ջրերի հեռացման համակարգով:

18. Գերեզմանատան հողատարածքներում, այդ թվում՝ սանիտարապաշտպանիչ գոտում արգելվում են դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն, ինչպես նաև պտղատու ծառերի ու թփերի տնկումը:

19. Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա:

20. Գերեզմանատան տարածքում արգելվում է բնակավայրերի խմելու և տնտեսական ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի տեղադրումը՝ բացառությամբ գերեզմանատան կարիքների համար տեղադրվողների:

21. Գերեզմանատների տեղափոխման դեպքում չի թույլատրվում դրանց զբաղեցրած հողատարածքներն օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

**Կ Ա Ր Գ**

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԱՆ ՀԱՄԱՐ  
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում են ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար, բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով լրացուցիչ տարածք տրամադրելու հետ կապված գործընթացները:
2. Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի տարածք հատկացվում է չորսից ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ միայն որպես գերեզմանատեղ օգտագործելու իրավունքով: Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 10,0 քառ. մետր:
3. Վճարովի հողատարածքը հատկացվում է բաց գերեզմանատներում հերթական թաղում իրականացնելու ժամանակ գոյություն ունեցող գերեզմանին կից ազատ տարածքի առկայության դեպքում և նոր ընտանեկան գերեզման հատկացնելու դեպքում՝ ըստ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծի (սխեմայի) և թաղումների հերթականության:
4. Արգելվում է վճարովի հողատարածքների հատկացումը մասնակի փակ գերեզմանատներում:
5. Գոյություն ունեցող գերեզմանին կից վճարովի հողատարածքի հատկացումը չպետք է խախտի գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը (սխեման) և խոչընդոտի հարևան գերեզմանների ու անցումների օգտագործումը:
6. Բաց կամ նոր կազմավորվող գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում), ելնելով տեղական պայմաններից, կարող են նախատեսվել առանձին հատվածներ (ծառուղիներ)՝ ընտանեկան գերեզմանների կազմավորման համար, ներառյալ վճարովի հողատարածքները:
7. Համայնքի ղեկավարը վճարովի տարածքը հատկացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի և մահացածի ընտանիքի անդամների կազմի մասին համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:
8. Վճարովի հիմունքներով հատկացվող ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի յուրաքանչյուր քռ. մետրի համար սահմանել 10.000 դրամ :
9. Հատկացված հողատարածքի արժեքը վճարվում է համայնքի բյուջե կատարված վճարման դիմաց տրվում է անդորրագիր: Ստացված միջոցներն օգտագործվում են գերեզմանատների պահպանման ու շահագործման համար:
10. Համայնքի ղեկավարը վճարման անդորրագրի հիման վրա համապատասխան նշում է կատարում գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում) և գրանցում գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման ու թաղումների գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում:
11. Համայնքի ղեկավարի ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ տեղում նախանշում է վճարովի հողատարածքի տեղը, չափերը և սահմանապայուներով նշում գերեզմանի սահմանները:

1. Սույն կարգով սահմանվում են վերահուղարկավորման հետ կապված գործընթացները:
2. Մահացածի հարազատների ցանկությամբ՝ մահացածի վերահուղարկավորումը (գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը) իրականացվում է թաղումից առնվազն երեք տարի հետո՝ մահացածի հարազատների միջոցների հաշվին:
3. Վերահուղարկավորումը թույլատրում է համայնքի ղեկավարը մահացածի հարազատի դիմումի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի կողմից տրված վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության վերաբերյալ եզրակացության հիման վրա: Մահացածի հարազատն այլ բնակավայրի գերեզմանատուն տեղափոխելու դեպքում ներկայացնում է նաև տվյալ բնակավայրի համայնքի ղեկավարի թույլտվությունը:
4. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանվում է ցերեկային ժամերին, համայնքի ղեկավարի ու պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության ներկայացուցչի մասնակցությամբ:
5. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանելուց հետո համայնքի ղեկավարի հանձնարարությամբ գերեզմանահորն անմիջապես ախտահանվում է, լցվում հողով, և տեղը հարթեցվում է:
6. Հանված աճյունը (աճյունի մնացորդները) փաթաթվում է բամբակյա կտորով և տեղադրվում պոլիէթիլենային պարկի մեջ, որից հետո տեղադրվում է փայտյա արկղի կամ դագաղի մեջ և տեղափոխվում նոր գերեզման: Նոր գերեզմանում թաղելուց առաջ աճյունը (աճյունի մնացորդները) հանվում է պոլիէթիլենային պարկից:
7. Համայնքի ղեկավարը նախկին և նոր գերեզմանների գերեզմանատների վերահուղարկավորման մասին գրանցումներ են կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյաններում ու գերեզմանների վկայականներում:
8. Գերեզմանատների տեղափոխման դեպքում վերահուղարկավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և այդ դեպքերի համար նախատեսված միջոցների հաշվին:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա ,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 18-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ *համաձայն հավելվածի:*

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ


2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՄԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Նոր Երգևիկա համայնքի օրակազանու  
14.04.2014թ. N 18-Ն որոշման  




| Հ/հ | Հողատեսքը                           | Ծածկագիրը | Կարգը | Մակերեսը<br>/հա/ | Մեկնարկային<br>գինը | Մահմանադիակումներ |
|-----|-------------------------------------|-----------|-------|------------------|---------------------|-------------------|
| 1.  | Գյուղ.<br>նշանակության<br>վարելահող | 0121-012  | 5     | 0,99359          | 362660              | չկա               |



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 19

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 66-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի, 6-րդ կետի և 20-րդ կետի (գ) ենթակետի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օտարվող համայնքնային սեփականության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, սահմանված հողերի կազմում և չի հանդիսանում օտարման կամ օգտգործման այլ սահմանափակումների օբյեկտ, ինչպես նաև այն, որ որպես ընդլայնում օտարվող հողամասը թե մակերեսի չափի և թե ձևի առումով հնարավոր չէ օտարել՝ որպես ինքնուրույն միավոր *համայնքի ավագանին որոշում է*

1. Քաղ. Արթուր Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող 07-050-0101-0007 կադաստրային ծածկագրով հողամասին կից գտնվող 01010008 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0,10999 հա գյուղ. նշանակության այլ հողակտորը կադաստրային արժեքով, որպես ընդլայնում ուղղակի վաճառքով օտարել վերջինիս:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա ,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 20-Ն

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետը, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ *համայնքի ավագանին որոշում է*

Նոր Երզնկա համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 19-ի <Նոր Երզնկա գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 38-Ն որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ *համաձայն հավելվածի*

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՍ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հավելված  
Նոր Երզնկա համայնքի ավագանու 2014  
թվականի ապրիլի 14-ի N20-Ն  
 որոշման

*Ն. Կարամյան*

| Ծրագիր | Հոդված | Հոդվածի անվանումը            | նախկինում<br>հաստատված-<br>/հազ.դրամ/ | պակասեցում /-/<br>ավելացում /+/<br>- | հաստատվող<br>ցուցանիշները |
|--------|--------|------------------------------|---------------------------------------|--------------------------------------|---------------------------|
|        |        | <b>Ծախսեր</b>                |                                       |                                      |                           |
| 11-1-2 | 4891   | ՀՀ համայնք. պահուստ. ֆոնդ    | 810.0                                 | -250                                 | 560.0                     |
| 01-6-1 | 4241   | մասնագիտական ծառայություններ | 50.0                                  | +250                                 | 300.0                     |
|        |        |                              |                                       |                                      |                           |
|        |        |                              |                                       |                                      |                           |
|        |        |                              |                                       |                                      |                           |
|        |        |                              |                                       |                                      |                           |
|        |        |                              |                                       |                                      |                           |



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա,  
0 232 3 67 91, norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2014թվականի N 21

### ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-ԻՆ ՏԵՂԱՑԱԾ ՁՅԱՆ ԵՎ ԱՊՐԻԼԻ 1-Ի, 2-Ի ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊՏՂԱՏՈՒ ԿՈՐԻԶԱՎՈՐ ԱՅԳԻՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և քննարկելով համայնքի ղեկավարի 2014թ. ապրիլի 8-ի թիվ 4 կարգադրությամբ ստեղծված ցրտահարության վնասները գնահատող հանձնաժողովի արձանագրությունը՝ *համայնքի ավագանին որոշում է*

1. Հիմք ընդունել 2014թ. մարտի 30-ին տեղացած առատ ձյան և ապրիլի 1-ի, 2-ի ցրտահարության հետևանքով պտղատու կորիզավոր այգիներին պատճառված վնասը գնահատող հանձնաժողովի արձանագրությունը՝ *համաձայն հավելվածի:*

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը ներկայացնելու համայնքի գյուղացիական տնտեսություններին պատճառած վնասը փոխհատուցելու համար:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՍ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ

*(Handwritten signatures of the council members)*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

